

զէզոտաննին, սարաճխանն, ախոռնին, մօյ-  
տանին, բաղնիքնին, խաներն, չարչունին — 505  
որ ամէն օր ի չարչու մի պաղար կու լինի —  
քահվէխանանին, զաֆաֆնոցնին, զատ սա-  
րայնուն, պաղչանին, պօսղանին — ի Վլան-  
կա պօսղան մի կայ, մեծ քան զքաղաք մի  
—, շուկանին, չարչունին, եւ փողոցնին 510  
մարդաչատ եւ սպրանօք լի:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԻՐ

Եւ այնպէս ողորմած եւ բարերար է ազգն  
Տաճկաց, որ ամէն փողոցի գլուխ աղբիւր է  
չինած. եւ շատ ջրի աման դրած, անուշ եւ  
բարեհամ. դեռ մէջ պաղպաղ ձգած որ եկող 515  
զնացօղն կու խմէ եւ դիւրի, այլ եւ բազում  
տեղիս ստոն ջուր եղեալ անջրդի եւ անմարդ  
տեղիս վասն ճանապարհորդաց: Իսկ այլք  
ուսովն կամ յիշեալ (յէշն) բարձեալ ածեն ի  
չուռ եւ ազաղակեն թէ Վասն սիրոյն Աս- 520  
տուծոյ սէպիլ ջուր ցուրա ըմպեցէք. եւ ոչ  
զոք խտրեն, կալուր կամ հրեայ: Ունին եւ  
զպրանոցս: Եւ օրն երկու անկամ կերակուր  
կ'եննէ հիւանդաց եւ հիւրոց: Եւ ոչ միայն ի  
քաղաքան, այլ եւ ի գիւղս եւ յանրնակ տե- 525  
ղիս, ի լերինս, ի այրս, ի անտառս եւ ի ա-  
նապատս շինեալ են խաներ, մեծամեծ մէ-  
ջիթնի, բաղանիք եւ շատրվանք. զան քար-  
վանք, իջնուն, երկու հեղ կերակուրն ու-